

ուրօսուն ոսկի, վարժարանի շինութեան համար հարիւր ոսկի նուէր ընելէն գատ՝ երկու հարիւր յիսուն ոսկի դարձեալ նուիրած են վարժարանի շինութեան համար:

Նմանապէս հոս կ'ընակին Մեծ. Սերովբէ Կիւլպէնկեան, Աբիկ Ունճեան եւ Շաշեան Պօղոս Էֆէնտիներն, *Սովելոց Մասնաժողովոյ* անդամներէն երեքն, որոնք իրենց միւս ընկերներուն հետ մինչեւ այսօր գիշեր ցերեկ աշխատելով՝ ամեն ազգասէր սրտերու մէջ անմոռաց յիշատակ մը թողած են, թէպէտ եւ մեր *Ազգային Ջոշերէն* հնգական օրինակ առած չեն: Ասանկ աշխատող ազգասէրներ ունենալնէս ետքը՝ սովն դեռ քառասուն տարի ալ տեւէ՝ բնաւ փոյթ չենք ըներ:

Թաղիս բնակիչներն ընդհանրապէս հարուստ են եւ ընդհանրապէս մէկ ձիթապտուղը, կ'ըսեն, չորս պատառ կ'ընեն. տնտեսագիտութիւնն մինչեւ այս աստիճան յառաջ գնացած է. բայց շատ հարուստներ այս ալ շոայլութիւն համարելով՝ որոշած են սեղանի վրայ մէկ ձիթապտուղ միայն դնել:

Քանի մը հարուստներուն համար ալ արեւը սովորականէն երեք ժամ վերջը կծագի, երբեմն ալ բնաւ չծագիր, եւ այդ հարուստներն մինչեւ երեկոյ քնանալով՝ գիշերը կարթնանան եւ կսկսին իրենց *բրէժային*:

Ուրիշ թաղերու հետ բաղդատմամբ՝ օդիի եւ զինիի գործածութիւնը քիչ է հոս. ընդհանրապէս *գոնեաք* կգործածուի:

Իգական սեռն *գոնեաքի* տեղ բամբասանք կգործածէ եւ առանց ջուրի: Իրարու ետեւէ զիրար գետինը կ'անցունեն, իսկ երբ դէմ առ դէմ գան՝ զիրար երկինք կը բարձրացունեն:

–Եթէ գործ չունիս՝ եկո՛ւր սա պատուհանին առջեւ քիչ մը կայնինք ու մտիկ ընենք:

–Տիկին Քաթի՛կ, օրիորդ Աղանին տեսա՞ր երեկ:

–Բարով խէրով չտեսնէի, ատ ո՛րչափ ճերմակ քուած էր... գլուխն ալիւրի պարկին մէջ է խօթեր, ի՛նչ է ըրեր:

–Անանկ ալ շրջագգեստ մը հագած էր, որ չորս կողմը բաց էր:

–Թերեւս *քումաշ* պակսած է:

–Գոնէ ոտները պզտիկ ըլլային:

–Այսու ամենայնիւ սատանան շատ գեղեցիկ է:

–Գեղեցկութիւնն ալ ո՞ւր է ասոր... երեսը բնաւ տեսնել չեմ ուզեր, կռողը տեսնէ: